Նարե Մելիքյանի հետազոտական աշխատանքը՝ վիշապի կամ վիշապների գործառույթների մասին, բավականին բովանդակալից էր, քանի որ տվյալ առասպելական կերպարը քննարկվում, վերլուծվում էր տարբեր մշակութային հանրույթների (սկանդինավյան, հնդկական, հունական, հռոմեական, չինական, ճապոնական, հյուսիսամերիկյան, հարավամերիկյան) կոնտեքստում: Խրախուսելի է, թե ինչպես է հետազոտողը վիշապին անրադառնում ոչ միայն տարբեր ժողովուրդների ընկալումների համատեքստում, այլ նաև թե ինչպես է այն ներառվում ու փոխակերպվում արվեստի տարբեր հարթություններում (գեղարվեստական գրականություն, գեղանկարչություն, կինո)՝ բերելով մի շարք օրինակներ: Շատ հետաքրքրական է նաև վիշապ կերպարի հետ կապված եվրոպական և ասիական մեկնաբանությունները՝ մի կողմից որպես քաոսի, չարիքի խորհրդանիշ (եվրոպական), մյուս կողմից՝ պտղաբերության, արգասավորության, նորարարության(հիմնականում Չինաստանում): Շատ կարևոր հանգամանք է հետազոտության վերջում Նարե Մելիքյանի դիտարկումը, որ հայկական ընկալումները վիշապի հետ կապված (վիշապաքարեր) կշարունակի իր հաջորդ հետազոտության մեջ: Տվյալ աշխատանքը արժանի է բարձր գնահատականի: